

ՆԱՄԱԿՆ ԻՔՐԵՒ ՀԱՅ ՎԷՊԻ ԺԱՆՐԱԿԱԶՄԻՉ ՏԱՐԻ (ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆՆԵՐ)

ՔՆԱՐԻԿ ԱՐՐԱՀԱՄԵԱՆ (Հայաստան)

բ. գ. թ., դրզենյար

Խ. Արովեանի անուան ՀՊՄՀ Վ. Պարտիզոնու անուան հայ նոր եւ նորագոյն գրականութեան եւ նրա դասասանդման մեթոդիկայի ամբիոն «Միհրոք» Գիտատուամասկան Կենտրոնի մեթոդիսար

Բանալի բառեր – նամակագրական վէպ, ազդեցութիւններ, թարգմանական եւ ինքնուրոյն գրականութիւն, ազգային դիմագիծ, կառուցողական եղանակ, թեմատիկ ընդհանրութիւններ:

Key words: epistolary novel, influences, translative and own literature, national feature, constructive shapes, thematic similarities.

Եթէ խօսելու լինենք նամակագրական վէպի, կամ ինչպէս անուանել ենք յօդուածի խորագրում՝ նամակի՝ իբրեւ վէպի ժանրակազմիչ տարրի հանդէս գալու ժամանակից, ապա պիտի արձանագրել, որ այն ի յայտ է եկել ըստ էութեան դասական վէպի ձեւաւորման շրջանից էլ առաջ՝ 15-րդ դարում: Առաջինը որպէս այդպիսին կաստիժացի գրող Դիեգո դէ Սան Պեդրոյի «Սիրոյ բանտը» երկն է (1485), որին յաջորդել են Էդմէ Բուրսուլտի «Նամակներ Բաբէթին» (1669), Գաբրիէլ Ժոզէֆ Գայերագի «Պորտուգալական նամակներ» (1669), Ջեյմս Հաուելի «Սովորական նամակներ» (1645-1650) գործերը:

Առաջին նամակագրական վէպի դասական օրինակը, սակայն, համարում է Աֆրա Բենի «Սիրային նամակներ պալատականի եւ իր քրոջ միջեւ» գիրքը (3 հատոր, 1684, 1685 եւ 1687):

18-րդ դարում ժանրը առաւել յայտնի դարձաւ շնորհիւ Սեմիւէլ Ռիչարդսոնի «Փամելա» (1740) եւ «Կլարիսա» (1749) գործերի: Աւելին՝ վէպի ժամանակակից տեսաբան Միլան Կունդերան գտնում է, որ հենց նա է «յայտնագործում վէպի նոր տեսակը նամակների միջոցով...» եւ այն մղում «դէպի մարդու ներքին կեանքի հետազօտութեան ուղին», ապա ուրուագծում ազդեցութիւնների շրջանակը. «Հանրայայտ են նրա (Ռիչարդսոնի – Բ. Ա.) մեծագոյն հետետորդները՝ Գէօթէն, Լաքլօն («Վտան-

գաւոր կապեր» վէպը (1782) – Բ.Ա.), Կոնստանը (Իզաբէլ դը Շարիէի համահեղինակութեամբ «Դ'Արսիէ որդու նամակները Սոֆի Դիւրֆէին» վէպը, 1786-1787 – Բ.Ա.), ապա Ստենդալն ու իր դարի գրողները»¹:

Զխորանալով ժանրի եւրոպական ծաւալումների մէջ՝ նկատենք, որ այն այսօր էլ, իր մէջ ներառելով նաեւ նամակի ժամանակակից այլազան դրսեւորումներ, պահում է իր կենսունակութիւնը:

Ինդիքի ենք դրել անդրադառնալ այն երկերին, որոնք ազդեցութիւնների շրջանակ են ձեւաւորել հայ նամակագրական վէպի զարգացման մէջ, ուստի փորձել ենք երեւան բերել երկխօսութիւնների շրջանակը, տիպաբանական ընդհանրութիւնները՝ համաշխարհային նամակագրական վէպին զուգահեռելով հայկականը:

Վիպագրական օրինակների ընդգրկումների տեսանկիւնից, կարծում ենք, պէտք է տարբերակում մտցնել. կան վէպեր, որոնք ուղղակի բնոյթով նամակագրական են, եւ վէպեր, որոնք օգտագործում են նամակները՝ դրուագային իմաստով: Երկրորդի առումով բազմազանութիւնը շատ է, եւ առանձին ուսումնասիրութեան առարկայ կարող են լինել շատ ու շատ հեղինակներ՝ Աբովեան, Պատկանեան, Ահարոնեան եւ ուրիշներ: Աւելին՝ նամակը 19-րդ դարի հայ գրականութեան եւ մանուկի մէջ հանդիպող հիմնական ձեւերից մէկն է:

Կեանքի դրուագների ներառման առումով կարող է առաջին հայեացքից թուալ, թէ վէպ-նամականին սահմանափակ է, բայց խորքային ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ նամակագրութեան միջոցով կարելի է հասնել վիպական բաւական լայն տարածութեան: Այդպէս է նաեւ զուտ, մաքուր նամակագրութեան մէջ, ասենք, գրողների միջեւ: Պատահական չենք համարում, օրինակ, կեանք-վէպ-նամակ զուգահեռականութիւնը Լեւոն Հախվերդեանի եւ Արմէն Յարութիւնեանի «Կեանքը նամակագրութեան մէջ» գրքի՝ թէկուզ խորագրային մակարդակում (2008):

Գալով հայ վէպի սկզբնաւորման գրապատմական նախադրեալներին՝ նկատենք, որ ազդեցութիւնների խնդիրը փաստում են հենց իրենք՝ մեր առաջին վիպագիրները: Դեռեւս 1851-ին լոյս տեսած «Խոսքով ու Մաքրուի» վէպի հեղինակ Յովհաննէս Հիսարեանը վէպի առա-

¹ Կունդերա Մ., Վէպի արուեստը, Եր., «Անտարէս», 2019, էջ 33:

ջաբանի տեսաբանական դատողություններում յանգում է հենց օտար ազդեցությունների անխուսափելիությանը. «Սակայն ուսկից պէտք է սկսիլ վիպասանությունը անանկ ազգի մը, որն աս գրութեան օրինակ մըն ալ չունի: Ուսկից ալ սկսին, միշտ օտարները օրինակել պիտի ըլլայ, կամ լաւ ես՝ թարգմանել»²: Ըստ էութեան՝ սա ոչ այլ ինչ է, քան հայ վիպասանութեան ճանապարհի ուրուագծումը: Եւ նամակագրական վէպը այս տեսակէտից անցել է ազդեցությունների ու թարգմանությունների գրեթէ նոյն ուղին, ինչ վիպագրությունն առ հասարակ:

Վերոնշեալ թարգմանական եւ ինքնուրոյն գրականութեան մշակման հետաքրքիր դրացնութեան մասին է վկայում Մատթէոս Մամուրեանի՝ 19-րդ դարում արեւմտահայ գրամշակութային խոշորագոյն կենտրոններից մէկում՝ Զմիւռնիայում ապրած ու ստեղծագործած, յայտնի «Արեւելեան մամուլ» հանդէսի խմբագրի ու թարգմանչի ստեղծագործական աշխարհը: Ճշմարիտ է գրականագէտ Գրիգոր Յակոբեանի դատողությունը, թէ նրա «ստեղծագործական աշխատանքի այս երկուությունը ունենում էր նաեւ համապատասխան ներազդեցություն՝ վէպի լեզուն, կառուցումաձևը, պօօտական համակարգը, եւ ընդհանրապէս կազմաբանությունը երուպական ստանդարտներին համապատասխանեցնելու, ու միաժամանակ, վէպի ազգային դպրոցի մասնայատկությունները բիրտեղացնելու առումներով»³: Այս համատեքստում գրականագէտը չի մոռանում նաեւ նամականի վէպի «հայկականացրած իւրօրինակ տարբերակները»⁴:

Դեռեւս 1860-ին Զմիւռնիայի «Միութիւն», ապա Թիֆլիսի «Կռունկ Հայոց աշխարհի» (1861)⁵ պարբերականներում սկսում է լոյս տեսնել Մատթէոս Մամուրեանի «Անկլիական նամականի կամ հայու մը ճակատագիրը» վէպը, որը առանձին գրքով հրատարակուած է Զմիւռնիայում, 1881-ին: Վէպի առաջաբանում կարդում ենք հեղինակի նամակը Ծերենցին, որ բացում է ստեղծագործական մտերմութեան (հենց նրան է նուիրել այս գործը) ու միաժամանակ վէպի մտայղացման մանրամասները⁶:

² «Բանասէր» / ամսական տետր ազգային, բանասիրական եւ քաղաքական, Կ. Պոլիս, 1851, թիւ 1, Յունուար:

³ «Հայ վէպի պատմութիւն», Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., 2005, էջ 159:

⁴ Նոյն տեղում, էջ 160:

⁵ Բանասիրական մէկ ճշգրտում. հեղինակը շփոթում է պարբերականի անունը՝ նշելով «Հայկական աշխարհի կռունկ», որի էջերում, սակայն, «Անկլիական նամականի»-ից որեւէ հատուած չգտանք:

⁶ Տես՝ Մամուրեան Մ., Անկլիական նամականի կամ հայու մը ճակատագիրը, Զմիւռնիա, 1881 (17 Ապրիլ, 1881 թուակիր նամակը):

Կառուցողական այս եղանակը դառնում է նախասիրութիւն նաեւ յաջորդ՝ «Հայկական նամականի» երկի համար, որը սկսել է հրատարակուել Գրիգոր Չիլինկիրեանի՝ նոյն Ձմիւռնիայում լոյս տեսնող «Ծաղիկ» հանդէսում, Վրոյր ծածկանունով՝ նախ՝ «Ազգային նամակ մը» (1864-ից)⁷, ապա «Հայկական նամականի» խորագրով սիւնակով, որը շարունակութիւն է գտնում «Արեւելեան մամուլ»ում (1871) եւ ապա հրատարակում առանձին գրքով (Ձմիւռնիա, 1872):

Եթէ համեմատելու լինենք երկու ստեղծագործութիւնները⁸, ապա կը նկատենք, որ ի տարբերութիւն «Հայկական նամականի»ի, որ գեղարուեստական որոշակի տարագի տակ, շատ աւելի քաղաքական սուր հարցադրումներով է առանձնանում, «Անկլիական նամականի»ն գեղարուեստական տարրերով է աչքի ընկնում, մի բան, որ նաեւ հեղինակն է խոստովանում. «Նիւթը խառն է, եւ մեծ մասամբ Հայոց վրայ: Ունի նաեւ վիպական կապ մը, որ թէեւ տեղ տեղ կը կտրի, բայց ի վերջէ կ'շարունակուի եւ վախճանի մը կ'յանգի»⁹:

Նշենք նաեւ, որ «Ծաղիկ»ի յետագայ համարներում Պերճ գրչանունով տպագրում է նաեւ Գրիգոր Չիլինկիրեանի «Ձմիւռնիական նամականի»ն¹⁰: Թէ՛ առաջին, թէ՛ երկրորդ հեղինակների պարագայում ակնյայտ է Շարլ Մօնտեսքէրի հեղինակած «Պարսկական նամականի»ի (կամ՝ «Պարսկական նամակներ»¹¹ – Բ.Ա.)՝ առաջին ֆրանսիական նամակագրական վէպի (1721) անցած ճանապարհի իւրօրինակ հայկականացումը: Պատահական չէ, որ «Ծաղիկ»ի էջերում նոյն ժամանակահատուածում լոյս են տեսել նաեւ պատառիկներ այս վէպից¹²:

⁷ Տե՛ս՝ Վրոյր, «Ազգային նամակ մը» // «Ծաղիկ» / կիսամսեայ հանդէս, Ձմիւռնիա, տպ. «Տէտէան», 1864, Գ. տարի, Է. շրջան, 15 Դեկտեմբեր, թիւ 101, էջ 316-318:

⁸ Նշենք, որ 1966-ին Երեւանում լոյս է տեսել Մամուրեանի երկերի ժողովածուն, որն ընդգրկում էր նաեւ այս գործերը: «Հայկական նամականի»ն ընդգրկուել է նաեւ Անթիլիասում լոյս տեսած 1990-ի ժողովածուի մէջ:

⁹ Մամուրեան Մ., Անկլիական նամականի կամ հայու մը ճակատագիրը, էջ 7:

¹⁰ Տե՛ս՝ Պերճ, «Ձմիւռնիական նամականի» // «Ծաղիկ», 1866, Ե. տարի, Ը. շրջան, 1 Ապրիլ, թիւ 117, էջ 436-438:

¹¹ Տե՛ս՝ Սօստէսքէ Շառլ, Պարսկական նամակներ / թարգմանիչ՝ Թերէզա Ստեփանեան, Եր., «Հայաստան», 2016:

¹² Տե՛ս՝ Սօստէսքէ, «Պարսկական նամականի» // «Ծաղիկ», 1866, Ե. տարի, Թ. շրջան, 1 Օգոստոս, թիւ 125, էջ 501-503:

Պատահական չենք համարում նաեւ Է. Մարթէի աշխատակցութիւնը «Ծաղիկ»ին, մասնաւորաբար նկատի ունենք վերջինիս «Հասարակային դաստիարակութիւն» յօդուածը, ուր գնահատականներ կան նաեւ Մօնտեսքէրի վերաբերեալ (Տե՛ս՝ «Ծաղիկ», 1866, 15 Յուլիս, թիւ 123, էջ 485):

Ինչ մնում է Մոնտեսքե-Մամուրեան զուգահեռին, առաջին հերթին իբրև ընդհանրություն նկատում ենք կառուցողական եղանակը, այն է՝ նամակագիրների ազգային պատկանելության յիշատակումը խորագրային մակարդակում եւ իրենց հայրենիքներից դուրս գտնուելու հանգամանքը: Իսկ արդէն բովանդակային մակարդակում ընդհանրությունները վերաբերում են մշակութային համակարգերի՝ մի դէպքում Արեւմուտքի, մասնաւորաբար ֆրանսիական եւ պարսկական, միւս դէպքում՝ անգլիական եւ արեւելեան, մասնաւորաբար հայկական ու պոլսական, զուգորդումներին: Իսկ որ Մամուրեանին «ուղղորդում է» Մոնտեսքեօն, նկատելի է նաեւ բնագրային մակարդակում¹³:

Նկատենք, որ ի շարս եւրոպական տասնեակ վէպերի՝ Մ. Մամուրեանը «Վերթէր» անուան տակ թարգմանել է Գէօթի «Երիտասարդ Վերթէրի տառապանքները» նամակագրական վէպը (1774), որն ունեցել է երեք տպագրություն (Զմիռնիա, 1868, Կ. Պոլիս, 1892 եւ 1926): Ի միջի այլոց, հետազօտողի համար հետաքրքրական նիւթ կարող են ներկայացնել «Վերթէր»ի եւ հայ գրականութեան մէջ տարբեր ժանրային կերպեր ունեցող երկերի, ինչպէս ասենք, Հայր Ղեւոնդ Ալիշանի, Պետրոս Դուրեանի քնարերգութեան եւ առ հասարակ, ռոմանտիկական բանաստեղծական դպրոցի զուգահեռները, որոնք, սակայն մեր խնդրառութիւնից դուրս են:

Իսկ արդէն զուտ վիպական տիրոյթում կարող ենք նշել ֆրանսահայ Վազգէն Շուշանեանի պարագան: Նախ, յիշենք, գործ ունենք քնարական արձակագրի հետ, որի համար նամակը գեղարուեստական նախասիրութիւն է դեռեաւ առաջին շրջանի գործերից: Նկատի ունենք «Առաջին սէրը» (1925) եւ «Մահուան առագաստը» («Երիտասարդ արուեստագիտուհիի մը օրագիրը», 1926) երկերը, որոնցից երկրորդը գրուած է օրագրային գրառումների տեսքով եւ ըստ էութեան՝ «ազգակցական կապի» մէջ է նամականի վէպի հետ: Յետագայում էլ, ինչպէս օրինակ «Սիրոյ եւ արկածի տղաքը» (1928) վէպի իբրև հանգուցալուծում հեղինակը նախընտրում է նամակի գրական ձեւը: Իսկ ահա «Գարնանային սիրոյ հեզ նամակներ» (1930) վիպակն ամբողջութեամբ տրուած է ժանրային հարազատութեամբ: Քնարականութեան այս շերտերը, միայնութեան ու տառապանքի զգացողութիւնները, որոնք բնորոշ են Շուշանեանի արձակին, անպայմանօրէն յիշեցնում են նաեւ Վերթէրին:

¹³ «Հայկական նամականի», գրեց՝ Վրոյր, Զմիռնիա, տպ. Տէտէեան, 1872, էջ 28:

Յիշենք թեկուզ մէկ այլ՝ «Ամրան գիշերներ» վէպի (1930) «Երիտասարդ անոք մարդու մը թղթերէն» ենթախորագիրը եւ նոյն երկուն «Ընկերոջս երեք տառապանքները» նովէլը, որոնք վերնագրային մակարդակից արդէն մօտենում են «Երիտասարդ Վերթէրի տառապանքները»ին:

Վերադառնալով ֆրանսիական գրական ասանդոյթի եւ հայ վիպագրութեան աղերսներին՝ չենք կարող շրջանցել Սրբուհի Տիւսաբի «Մայտա»ն, որի սիւժետային տարրերի մէջ նկատել ենք որոշակի նմանութիւններ Շոդերլո ղը Լակլոյի «Վտանգաւոր կապեր» վէպի հետ, որոնք վերաբերում են բարոյական խեղուած ըմբռնումների եւ խարդաւանքների ցուցադրութեան դրուագներին: Ինչքան էլ մեր նշած վիպական գործը ձգտում էր իրականութեան ենթահողով վեր հանել հայ կնոջ ազատագրութեան խնդիրները, պատասխաններ տալ ընկերային հարցադրումների, այնուամենայնիւ մնում էր ռոմանտիկականի շրջագծում: Հակադրելով ռոմանտիկական եւ ռէալիստական ուղղութիւնները՝ «Հայոց վիպական գրուածներ» յօդուածում Գրիգոր Արծրունին յայտնում է հեղինակից իր անբաւարարութիւնը. «Եւ նոյն իսկ այն ժամանակ, երբ մեր գրական, վիպական ասպարէզի վրայ յայտնուում է այնպիսի մի հեղինակ, ինչպէս Տիկին Սրբուհի Տիւսաբն է, որը եթէ չասենք մի նոր դարագլուխ է կազմում հայոց վիպագրութեան մէջ, գոնէ նոր, մինչեւ այժմ չէղած տարր է մտցնում հայոց բովանակի մէջ, այն է հասարակական տենդէնցիա, ձգտում հնացած կազմակերպութիւնը վերանորոգելու,– դարձեալ (նրա – Ք.Ա.) բովանները մնում են իրականութիւնից, ռէալիզմից զուրկ, ... ֆրանսիական բովանտիկական՝ անբնական դպրոցի հետեւող»¹⁴:

Ենթաժանրի նախասիրութեան առումով հայ վիպագրութեան ազդեցութիւնների միւս շրջանակը վերաբերում է ռուս գրականութեանը: Այստեղ առաջին հերթին յիշատակելի է Ֆ. Դոստոեւսկին: Դեռեւս 1845 թուականին լոյս տեսած նրա «Իսեղճ մարդիկ» նամակագրական վէպի հայերէն թարգմանութիւնը նորից գրողական էր: Ճիշդ է, Լար-Դոսն այն թարգմանեց (1930) Հայպետհրատի պատուէրով¹⁵ եւ լոյս տեսաւ իր հեղինակած նամակագրական «Աննա Սարոյեան» վիպակի լոյսընծայումից

¹⁴ Գ. Ա., Հայոց վիպական գրուածներ // «Մշակ» / գրականական եւ քաղաքական լրագիր, Թիֆլիս, 1886, տասն եւ չորրորդ տարի, 25 Դեկտեմբեր, Հինգշաբթի, թիւ 146:

¹⁵ Այս մասին տես նամակը՝ ուղղուած Դ. Վանանդեցուն (Լար-Դոս, Երկերի ժողովածու չորս հատորով, հ. 4 / բանաստեղծութիւններ, յօդուածներ, նամակներ, թարգմանութիւններ, Եր., «Նայիրի», 1990, էջ 226):

գրեթէ չորս տասնամեակ անց (1934)¹⁶, բայց մենք ունենք այն համոզումը, որ շատ բանով պայմանաւորել է հայ վիպասանի ստեղծագործական նախապատուութիւնը: Յիշենք նաեւ, որ նամակն իբրեւ գեղարուեստական հնարանք կամ գեղարուեստական լուծում նա օգտագործել է շատ ւաւելի ուշ լոյս տեսած «Մահը» վէպում (1912):

Առ հասարակ, եթէ ուշադրութեամբ զննելու լինենք Նար-Դոսի պատկեր-կերպարի կառուցման իրայատկութիւնները, ապա այնտեղ կարող ենք որսալ Դոստոեւկու միջամտութիւնը: Այս տեսակէտից բոլորովին էլ պատահական չենք համարում հայ հեղինակի բազմակի խոստովանութիւնները իր գրական կազմաւորման ճանապարհին ռուս հեղինակի դերակատարութեան շուրջ. 1908-ին Եւրի Վեսելովսկուն գրած նամակում կարդում ենք. «Կասկած չկայ, որ ես շատ բանով պարտական եմ ռուս գրականութեան, առանձնապէս նրա պատմողական ճիւղին... Ինձ վրայ ամէնից ուժեղ ազդեցութիւն են ունեցել չորս գրող՝ Տուրգենեւը (որին ես աստուածացնում եմ), Գոնչարովը, Տոլստոյը եւ Դոստոեւսկին»¹⁷: Միտքը գրեթէ նոյնութեամբ, այս անգամ հակադրելով նաեւ արեւմտաեւրոպական իր կարդացած գրական շրջանակներին՝ Հիւօօ, Շպիլհագէն, Իբսէն, Ջօլա, կրկնում է 1913-ի Մայիս 19 թուակիր նամակում՝ ուղղուած Յուլակ Խանգադեանին՝ նկատելով, որ այդ (ռուս գրողների – Բ.Ա.) «հմայքից մինչ օրս էլ չեմ կարողանում ազատուել»¹⁸:

Նկատենք ոչ երկրորդական մի հանգամանք եւս, որ ազդեցութիւնների շրջանակները երեւան են գալիս նաեւ բնագրային զանազան մակարդակներում: Յիշենք Գէօթէին եւ Դոստոեւսկուն դիմումները «Աննա Սարոյեան»ում¹⁹, նոյն Դոստոեւսկու եւ Նար-Դոսի մասին շուշանեանական ակնարկները «Մահուան առագաստը» եւ «Սիրոյ եւ արկածի տղաքը» երկերում²⁰:

¹⁶ Այս թարգմանութիւնը մտել է Դոստոեւսկու «Երկերի ժողովածուի» առաջին հատորի մէջ (Եր., 1934):

¹⁷ **Նար-Դոս**, Երկերի ժողովածու չորս հատորով, հ. 4, էջ 195:

¹⁸ **Նոյն տեղում**, էջ 205:

¹⁹ **Նոյնը**, Աննա Սարոյեան, Թիֆլիս, 1906, էջեր 17, 72, 61 եւ այլն:

²⁰ Տե՛ս՝ **Շուշանեան Վ.**, Մահուան առագաստը եւ Առաջին սէրը, Պէյրուֆ, «Էտվան», 1959, էջ 14, 28, 36, 38-39: **Նոյնը**, Սիրոյ եւ արկածի տղաքը, Պէյրուֆ, «Էտվան», 1957, էջ 40, 54:

Եւ վերջապէս, հայ նամակագրական վէպի տարեգրութեան մէջ առանձին ու անշրջանցելի իրողութիւն է Երուանդ Օտեանի ստեղծագործութիւնը: Յատկապէս նկատի ունենք նրա «Վաճառականի մը նամակները կամ կատարեալ մարդ ըլլալու արուեստը» (1914) եւ «Ընկեր Բ. Փանջունի» (1909, 1914, 1923) վիպակները, որոնք նամականու ժանրի ուրոյն իրացումներ են եւ քննութեան պատուհաններ են բացում պատկերային կառոյցի եւ գրական ուղղութեան հարցադրումների տեսանկիւնից:

Վիպական վերոնշեալ ստեղծագործութիւնների դիտարկումների արդիւնքում առանձնացրել ենք տիպաբանական եւ ձեւաբովանդակային մի քանի ընդհանրական յատկանիշներ:

Նախ, նամակագրական վէպերի ընդունուած բնութագրիչներին դիմելով՝ կարող ենք նկատել, որ Գէօթէի «Վերթեր»ը, Մամուրեանի «Հայկական նամականի»ն, Նար-Դոսի «Աննա Սարոյեան»ը, Ե. Օտեանի «Ընկեր Բ. Փանջունի»ն մոնոլոգային, նոյն Մամուրեանի «Անկլիական նամականի»ն, Դոստոեւսկու «Իսեղճ մարդիկ»ը, Վազգէն Շուշանեանի «Գարնանային սիրոյ հեզ նամակներ»ը երկխօսական, իսկ Շոդերլո դը Լակլոյի «Վտանգաւոր կապեր»ը, Սրբուհի Տիւսաբի «Մայտա»ն եւ Ե. Օտեանի «Վաճառականի մը նամակները կամ կատարեալ մարդ ըլլալու արուեստը» բազմախօսական (բազմաձայնական) բնոյթ ունեն, թէպէտ միանշանակ սահմանազատումը կարող է եւ արհեստական թուալ, օրինակ երբ դիմելու լինենք Աննա Սարոյեանի եւ ընկերուհու՝ Հռիփսիմէի երկխօսութեանը, որն ապահովում է միայն Աննայի գրած նամակների տիրոյթում կամ Գոզմայի՝ տարբեր մարդկանց ուղղուած նամակներին, որոնք բազմախօսականի տակ, սակայն, ըստ էութեան բացում են մէկ մարդու էութիւն:

Ինչ մնում է սիւժէտային տարրի որոշակի սխեմատիկ լուծումներին, ապա այն յանգում է կամ նամակագիրների հանդիպման (Վահագն եւ Աստղիկ), կամ բաժանման (Վարվառա Դոբրոսելովա եւ Մակար Դեուշկին) եւ կամ ընդհատում է նրանցից մէկի մահով (Վերթեր, Մայտա, Աննա Սարոյեան):

Վիպական այլ տեսակների համեմատութեամբ՝ նամականի վէպերը, ի բաց առեալ ճամբորդականները, որոնք նաեւ քաղաքակրթական երկխօսութիւնների դուռ են բացում, ինչպէս օրինակ Մօնտեսքէոյի կամ Մամուրեանի պարագային, հիմնականում փոքրածաւալ են: Սա թերեւս

այն դէպքերից է, երբ ձեւը պայմանաւորել է նաեւ բովանդակային կողմը. նամակն ինքը զգացական շեղումների լաւագոյն արտայայտիչը լինելով՝ նաեւ այդպիսին է դարձրել գործերը: Գէօրձի «Վերթեր»ը, Մամուրեանի «Անկլիական նամականի»ն եւ Շուշանեանի «Գարնանային...»ը ռոմանտիզմի լաւագոյն արտայայտութիւններ են: Սակայն գրականութեան մէջ ռէալիզմին տրուած նախապատուութիւնը այս դէպքում չի խանգարել Դոստոեւսկուն, Տիւսաբին, Նար-Դոսին դիմելու այս ձեւին:

Այդ ռոմանտիկականի չափաբաժինը նամակներում պահպանուում է նաեւ հերոսների՝ գրքերի մասին գնահատական-դատողութիւններով, ինչպէս Գէօրձի բնագրում Հոմերոսի, Օսիանի, Լէսսինգի, դը Լակլոյի մօտ Ջօլայի, Դոստոեւսկու մօտ Պուշկինի, Նար-Դոսի երկում Դոստոեւսկու, Գէօրձի, Տուրգենեւի եւ այլոց վկայակոչումները: Այս համատեքստում յատկապէս կ'ուզէինք առանձնացնել Շուշանեանի պարագան, որի երկի համար գրականութեան նկատմամբ հերոս-հեղինակի վերաբերմունքը ուղղակի դարձել է կառուցողական եղանակ: Նախ, գրող-արուեստագէտներ են նամակագիրները՝ Վահագնը եւ Աստղիկը, հեթանոսական ոգու կրողները, եւ երկրորդ՝ 8 մասերից իւրաքանչիւրը սկսուում է որեւէ հեղինակից արուած մէջբերումով՝ Ալբեր Սամէն, Ժիլ Բընար, Գի դը Մոպասան, Վիկտոր Հիգօ, Ժորժ Սանդ, Հենրի Բաթայլ, Սայեաթ-Նովա եւ այլն, իսկ արդէն բուն նամակագրական էջերում ռոմանտիզմի լաւագոյն արտայայտիչը դառնում է Ալֆոնս Լամարթինը:

Ենթաժանրին բնորոշ յատկանիշներից մէկն էլ հոգեբանական լարումն է, ներաշխարհի ծայքերի բացայայտումը, սեփական հոգեվիճակների շուրջ հերոսների բացատրութիւնները: Ի դէպ, այս յատկանիշը բնորոշ է մեր նշած բոլոր նամակագրական երկերին, այդ թւում՝ եւ Եր. Օտեանի երգիծանքին:

Վերելում նշեցինք, որ վէպ-նամակագրութիւնը ժանրա-տեսակային աղերսներ ունի վէպ-օրագրութեան հետ: Այդ իմաստով յաճախ է վերցնում վերջինիս բնորոշ վերյուշի, անցեւատյոց մտորումի տարրը, ուր գերակշռողը մանկութեան մասին յիշատակներն են, որոնք յաճախ սուր հակադրութեան մէջ են ներկայի թշուառութեան հետ. այդպէս են ներկայանում մեզ Վարվառայի յիշողութիւնները ծննդավայրի ու իրենց բարեկեցիկ առօրեայի մասին, Նելսոնի եւ Աննա Սարոյեանի վերադարձը

մանկական օրերին եւ տառապանքը ներկայի դիմաց, Վահագնի վկայակոչումները կորսուած հայրենական տան ու հարազատների մասին:

Այս գործերին բնորոշ է նաեւ բնութեան բացարձակացումը, ինչպէս օրինակ Վերթերի մտորումներում, երբ յայտարարում է, «թէ պէտք է միշտ բնութեան հետեւիլ: Այն միայն անսպառելի է ու ճոխ, այն միայն երեւելի վարպետներ կը շինէ»²¹: Այդպէս են բնութեան մէջ մխիթարութիւն որոնում նաեւ Դոստեւսկու, Սրբուհի Տիւսաբի, Նար-Դոսի, Վազգէն Շուշանեանի հերոսները:

Եւ իբրեւ ամփոփում՝ նշենք, որ հայ նամակագրական վէպը, որքան էլ ծագումնաբանութեամբ դիմել է եւրոպականին, այնուամենայնիւ բովանդակային մակարդակում պահպանել է ազգային դիմագիծն ու հայ մարդու հոգեբանութիւնը. յիշենք Մամուրեանի, Տիւսաբի՝ գրեթէ մանիֆեստի արժէք ունեցող դիտարկումները հայրենիքի ըմբռնման մասին, Օտեանի ազգային հարցադրումները, Շուշանեանի՝ կորուսեալ ծննդավայրի վկայակոչումները, տարրեր, որոնք անշփոթելի են դարձրել հայ նամակագրական վէպը:

SUMMARY

LETTER AS A COMPOSING ELEMENT OF ARMENIAN NOVEL GENRE

Knarik Abrahamyan

In this article the author tried to show the development of the Armenian epistolary novel and especially emphasizes connections between European, Russian and Armenian writers. It is obvious that in Western Armenian literature these influences come from English, German or French and in Eastern Armenian literature from Russian novelists. The author brings examples and reveals typical characters that are common for the discussed writers (Goethe, de Montesquieu, Dostoevsky, Mamourian, Tyusab, Nar-Dos and others).

²¹ **Վերթէ**, Վերթեր / թարգմանեց՝ Մ. Մամուրեան, Կ. Պոլիս, երրորդ տպ., 1926, էջ 19: